ԿՌԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

«ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

Տարեկան հաշվետվություն

2022

«ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022

ԿՈԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

Տարեկան հաշվետվություն 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի մասին 5
Ֆեմինիստական ապահով տարածք և կանանց ու աղջիկների զորեղացում.....7
Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք.....13
Ֆեմինիստական ադվոկացիա.....17
2022-ին իրականացված ծրագրեր.....23
«Աջակցություն Հայաստանում կանանց կայուն քաղաքացիական հասարակության կազմակերպմանը բազմակի ճգնաժամերի համատեքստում» ծրագիր.....24
«Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագիր 25
Կանանց ձայն ռադիո.....27
Հաղորդակցություն և մեդիա 29

«ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի ՄԱՍԻՆ

«Կանանց ռեսուրսային կենտրոն»-ը (այսուհետ՝ ԿՌԿ) ֆեմինիստական իրավապաշտպան կազմակերպություն է: ԿՌԿ-ի տեսլականն է հայաստանյան հասարակությունում կանանց[1] հավասար և ինքնորոշ կարգավիճակի հաստատումը և հայրիշխանական հասարակարգի կողմից կնոջ նկատմամբ կիրառվող բռնաճնշումների և սահմանափակումների վերացումը: ԿՌԿ-ն իր գործունեությամբ ձգտում է հասարակության մեջ վարքային և նորմատիվային փոփոխության՝ ներազդելով պետական քաղաքականության, սոցիալ-մշակութային և օրենսդրական դաշտերի վրա:

ԿՌԿ-ն հիմնադրվել է 2003թ-ին և գործում է **3** հիմնական թեմատիկ ուղղություններով՝

Ֆեմինիստական ապահով տարածք և կանանց ու աղջիկների զորեղացում,	Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք,	Կանանց իրավունքների ջատագովություն:

ԿՌԿ-ն իր հիմնադրման առաջին իսկ օրվանից առանձնացել է ֆեմինիստական մոտեցմամբ, որը կանանց առաջարկում է առանց խտրականության, համագործակցությամբ, հավասար հնարավորություններով ու փոխօգնությամբ լի ֆեմինիստական ապահով տարածք, որտեղ յուրաքանչյուր կին կարող է նախաձեռնել ու իրականացնել սեփական գաղափարները, եթե վերջիններս դեմ չեն ֆեմինիստական գաղափարախոսությանը և արժեքներին:

ԿՌԿ-ի առաքելությունն է՝

Կանանց և աղջիկների տարբեր խմբերի զորեղացումն ու աջակցումը,	կանանց նկատմամբ խտրականության և բռնության մշակութային և համակարգային դրսևորումների վերհանումն ու նվազեցումը,

ֆեմինիստական գաղափարախոսության տարածումն ու հայրիշխանական համակարգի կողմից ստեղծված անհավասարությունների դեմ կանանց միասնական պայքարի սատարումը:

Մենք հասկանում և ընդունում ենք այն փաստը, որ «կին» տերմինը բազմաչափ է՝ ներառյալ բազմաթիվ ենթաինքնություններ, կատեգորիաներ և արտահայտումներ:

ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՋՈՐԵՂԱՑՈՒՄ

ԿՌԿ-ի գործունեության հիմնական ուղղություններից է ֆեմինիստական ակտիվիզմը: Ծավալելով ֆեմինիստ ակտիվիստական գործունեություն՝ կազմակերպությունը փորձում է նպաստել ֆեմինիստական շարժման ծավալմանը և հայրիշխանական համակարգի տապալմանը: ԿՌԿ-ի ֆեմինիստական տարածքը գործում է 3 հիմնական ուղղություններով. դրանք են՝ կանանց և աղջիկների կարողությունների զարգացում, ֆեմինիստական ակտիվիզմ և կանանց բարօրություն:

Ապահով տարածք

Իր հիմնադրման օրվանից, ԿՌԿ-ն ստեղծել է ապահով տարածք, որտեղ տարբեր խմբի կանայք կարող են կիսվել իրենց փորձառություններով, քննարկել և ինքնաարտահայտվել՝ առանց քննադատության և խտրականության բախվելու: Մենք բաց ենք երկուշաբթիից շաբաթ՝ բացի չորեքշաբթի օրերից, ժամը՝ 14:00-19:00-ին: Այն ազատ է աշխատելու, սովորելու, մեր գրադարանից օգտվելու և աշխատակիցների հետ շփվելու համար: Այստեղ անցկացնում ենք բազմաթիվ քննարկումներ, տեղեկատվական հանդիպումներ, կինոդիտումներ, գրքերի ակումբներ, տարբեր միջոցառումներ, որոնք ուղղված են մասնակիցների բարօրության և հոգեկան առողջության բարելավմանը: Այս տարի մեր ապահով տարածքը ունեցել է **376** այցելություն:

Կարողությունների զարգացում հանուն կանանց զորեղացման և գենդերային հավասարության

Կանանց իրավունքների դասընթաց

Ակտիվիստական տարածքի կարևոր նախաձեռնություններից է «Կանանց իրավունքների եռօրյա դասընթաց»-ը, որն ամեն տարի իրականացվում է 2 անգամ՝ սկսած ԿՌԿ-ի հիմնադրման օրվանից: Այս 3 օրերի ընթացքում ուսումնասիրում ենք հետևյալ 6 թեմաները՝ Մարդու իրավունքներ, Գենդեր, Գենդերային բռնություն, Ֆեմինիզմ, Սեռական և վե-

բարտադրողական առողջություն և իրավունք, Կանայք, խաղաղություն և անվտանգություն:

Կանանց իրավունքների դասընթացների շրջանակներում մասնակիցներին հնարավորություն է տրվում կիրառել իրենց գիտելիքները և միասին մշակել նախաձեռնություններ՝ նպաստելու Հայաստանում գենդերային հավասարության շարժմանը և անդրադառնալու գենդերային կարծրատիպերին և կանանց հիմնախնդիրներին իրենց համայնքներում: 2022թ-ին ԿՌԿ-ի աջակցությամբ իրականացվել են 6 նախաձեռնություններ:

«Աղջիկները խոսում են» ծրագիր

Ծրագրի նպատակն է հարթակ ստեղծել Հայաստանի տարբեր մարզերից դեռահաս աղջիկների համար, ովքեր կարիք ունեն կիսվելու, քննարկելու իրենց խնդիրներն ու անհանգստությունները, նպատակներն ու երազանքները, խոսել այն թեմաների մասին, որոնք կարևոր են դեռահաս աղջիկների համար մեր հասարակությունում:

2022թ-ին, կամավորների օգնությամբ 8 հանդիպումների ընթացքում քննարկել ենք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ ինքնագնահատական, ինքնաընկալում, առողջ հարաբերություններ, մարմնի դրական ընկալում, սեռական առողջություն, ֆեմինիստական գրականություն և այլն: Նույնատեսակ հանդիպումներ իրականացրել ենք նաև Արարատի մարզի դպրոցներից մեկում՝ **30 աղջիկների** հետ:

Աղջիկների զորեղացման ճամբար

Հուլիսի 22-24-ը իրականացրել ենք ամենամյա «Աղջիկների զորեղացման ճամբար»-ը, որը հնարավորություն է տալիս **18-25 տարեկան 20 աղջիկների հետ** քաղաքից դուրս ապահով տարածքում 3 օրերի ընթացքում քննարկումներ ունենալ ֆեմինիզմի, սեռականության, արտ-ակտիվիզմի, գրականության, մշակույթի և շատ տարբեր ֆեմինիստական հիմնախնդիրների մասին: Բացի տեղեկատվական քննարկումներից, ճամբարը դառնում է ապահով վայր աղջիկների համար՝ ընկերանալու, կիսվելու և համակարծիք մարդկանց հանդիպելու:

Ֆեմինիստական քննարկումներ

Տարեկան մի քանի անգամ մեր տարածքում կազմակերպվում են ֆեմինիստական քննարկումներ, որոնց ընթացքում մեր կողմից հրավիրված փորձագետներն իրականացնում են քննարկումներ ընտրված թեմաների վերաբերյալ: Այս քննարկումների գաղափարը Հայաստանում ֆեմինիստական և կանանց խնդիրների շուրջ դիսկուրս ստեղծելն է:

2022թ-ի ընթացքում անցկացվել է 5 հանդիպում հետևյալ թեմաներով՝ էկոֆեմինիզմ, կանանց սեռական օրգանների խեղաթյուրում, հանդիպում ԿՌԿ-ի իրավաբանի հետ ամուսնալուծության և աշխատանքային իրավունքների վերաբերյալ:

Ֆորում թատրոն

Որպես մեր հավաքական խնամքի և ամոքման ծրագրերի մի մաս, ապրիլ-մայիս ժամանակահատվածում մենք շաբաթական երկու անգամ անցկացրել ենք ֆորում թատրոնի հանդիպումներ: Դասընթացի ավարտին բեմադրվել և քննարկվել են **3 պատմություններ:**

Ֆեմինիստական ակտիվիզմ և կանանց իրավունքներ

Ցուցահանդես նվիրված Կին իրավապաշտպանների միջազգային օրվան

Ամբողջ աշխարհում նոյեմբերի 29-ը նշվում է որպես կին իրավապաշտպանների միջազգային օր: Կազմակերպելով «Կին իրավապաշտպանների օր. հիշելով ԿՌԿ արխիվները» ցուցահանդեսը՝ մենք ցանկանում էինք վերհիշել այն կին իրավապաշտպանների անցած ճանապարհը, որոնք երկար տարիներ ԿՌԿ-ի հետ միասին ակտիվ կազմակերպել և մասնակցել են

տարբեր ցույցերի, ակցիաների, միջոցառումների, աշխատել են կազմակերպությունում կամ կամավորություն իրականացրել: Ցուցահանդեսը ունեցել է 50-ից ավելի այցելու:

Մարտի 8-ը՝ կանանց իրավունքների օր

Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային օրվա նպատակն է վեր հանել կանանց ձեռքբերումները, ճանաչել մարտահրավերները և ավելի մեծ ուշադրություն կենտրոնացնել կանանց իրավունքների և գենդերային հավասարության կարևորության վրա:

Ամեն տարի ԿՌԿ-ն կամավորների օգնությամբ կազմակերպում է արշավներ և միջոցառումներ՝ բարձրացնելու հասարակության իրազեկվածությունը մարտի 8-ի իրական նպատակի վերաբերյալ: Այս տարի մարտի 8-ի հիմնական գաղափարն էր հիշեցնել մարդկանց, որ այն, նախ և առաջ, կանանց իրավունքների միջազգային օրն է և՝ ինչու է այն մինչև հիմա կարևոր:

ԿՌԿ-ի կամավորները

ԿՌԿ-ն իր հիմնադրման օրվանից կարևորել է կամավորների դերն իր գործունեության մեջ: ԿՌԿ-ի կամավորները նպաստում են Հայաստանում ֆեմինիստական օրակարգի իրականացմանը: Ներկայումս մենք ունենք 15-ից ավելի կամավորներ, ովքեր ակտիվորեն ներգրավված են կազմակերպության գործունեության մեջ՝ կազմակերպության աջակցմամբ իրականացնելով նաև իրենց սեփական նախաձեռնությունները:

ԿՌԿ-ում կամավորելու համար անհրաժեշտ է լրացնել կամավորության հայտը: Իր գործունեության 20 տարիների ընթացքում ԿՌԿ-ն ունեցել է հարյուրավոր կամավորներ, ովքեր իրենց մեծ ներդրումն են ունեցել կազմակերպության առաքելության իրականացման մեջ:

Հոգեբանական աջակցություն

Վերջին տարիներին համավարակի և պատերազմի հետևանքով առաջացած ճգնաժամերը ավելի խորացրին կանանց իրավունքների ոտնահարումները, գենդերային բռնությունը: Այս ամենին հակազդելու համար ԿՌԿ-ն նախաձեռնել է հոգեբանական աջակցության տրամադրում՝ խմբային հանդիպումների միջոցով: Հոգեբանական ծառայությունը կազմակերպությունում իրականանում է երկու հիմնական ուղղություններով՝ թեմատիկ հանդիպումներ և անձնային աճ:

2022թ-ի ընթացքում հոգեբանական 6 թեմատիկ հանդիպումներ են եղել հետևյալ հաջորդականությամբ՝ Ջայրույթ՝ ազդեցությունն ու նշանակությունը մեր կյանքում, Տագնապներ և վախեր, Իմ սահմանները, Դաշտանադադար (թեմատիկ հանդիպումը երկու մասից է բաղկացած եղել՝ հոգեբանական և բժշկական մասեր), Հարաբերություններ (թեմատիկ հանդիպումը երեք հաջորդական հանդիպումների միջոցով է տեղի ունեցել): Ընդհանուր առմամբ թեմատիկ հանդիպումներին մասնակցել են տարիքային տարբեր խմբերի 37 կանայք: Անձնային աճի դասընթացները իրականացվում են արտ թերապիայի միջոցով. այս հանդիպումներին մասնակցել են 51 կանայք:

Իրավաբանական խորհրդատվություն

ԿՌԿ-ն տրամադրել և շարունակում է տրամադրել իրավաբանական խորհրդատվություն: Սրա շնորհիվ կանայք հնարավորություն են ունենում գտնել իրավական հարցերի հավաստի պատասխաններ, ինչպես նաև, ստանալ իրավական խնդիրներին լուծումներ տալու խորհուրդներ: Իրավաբանական խորհրդատվության տրամադրման նպատակով 2022թ-ին ԿՌԿ-ն ունեցել է 200 զանգ, ևս 21 կանայք այցելել են կազմակերպություն:

Խորհրդատվության համար դիմել են ինչպես Հայաստանի, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիները: Մասնավորապես, իրավաբանական խորհրդատվության նպատակով զանգեր ենք ստացել նաև Ռուսաստանից: Զանգեր ենք ստացել Երևանից և Հայաստանի տարբեր մարզերից: Կազմակերպությունը իրավական աջակցություն է տրամադրել Լեռնային Ղարաբաղից տեղահանված կանանց:

ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք (ՍՎԱԻ) ծրագիրը գործում է կազմակերպության ներսում 2008թ-ից և կազմակերպության կարևոր առաջնահերթություններից մեկն է հանդիսանում: Խոսելով կանանց սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքի մասին, մենք հասարակության մեջ բարձրաձայնում ենք այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են կանանց սեփական մարմնի վերաբերյալ որոշումների կայացման խոչընդոտները և սեռականության դիտարկումը որպես տաբու և փակ թեմա: ՍՎԱԻ-ի նպատակն է պաշտպանել տարբեր խմբի կանանց սեռական և վերարտադրողական իրավունքները՝ իրազեկվածության բարձրացման և ոլորտում առկա հիմնախնդիրների բարձրաձայնման և լուծման մեխանիզմներ մշակելու շնորհիվ:

ՍՎԱԻ ծրագրի շրջանակներում իրականացվում են հետևյալ գործառույթները.

Անհատական խորհրդատվություն

Խորհրդատվությունն իրականացվում է ինչպես առերես, այնպես էլ առցանց տարբերակներով՝ պահպանելով գաղտնիությունը: Անհրաժեշտության դեպքում կանայք կարող են ուղղորդվել վստահելի բուժհաստատություններ մեր մասնագետների ուղեկցությամբ: Անհատական խորհրդատվություն ստանալու համար կարող եք զանգահարել 094-56-57-21 հեռախոսահամարով:

2022թ-ին, 65 կանայք և 4 տղամարդիկ ստացել են անհատական խորհրդատվություն:

Կարողությունների զարգացում և իրազեկվածության բարձրացում

Կարողությունների զարգացման դասընթացներ մանկաբարձ-գինեկոլոգների և ընտանեկան բժիշկների համար



«Վերարտադրողական իրավունքների շահերի պաշտպանության» ցանցը (այսուհետ՝ Ցանց) մշակել է վերապատրաստման մոդուլ, որը բժշկական ծառայությունների մատուցման իրավունքահեն և ոչ խտրական մոտեցում է ներկայացնում: Այս նախաձեռնությունը իրականություն է դարձել ՍՎԱԻ ծրագրի շրջանակներում 2017թ-ին: Մանկաբարձ-գինեկոլոգների և ընտանեկան բժիշկների համար նախատեսված ձեռնարկը հավաստագրվել է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից 2019թ-ին, իսկ 2021թ-ին վերահաստատվել է ևս 2 տարով: Հարկ է նշել, որ դասընթացն ավարտելուց հետո մասնակիցները ստանում են ՇՄԶ տեսական կրեդիտներ: 2022թ-ին մենք երկօրյա վերապատրաստման դասընթացներ ենք իրականացրել՝ վերապատրաստելով 204 մանկաբարձ-գինեկոլոգների և ընտանեկան բժիշկների Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերից:

Իրազեկության բարձրացման առցանց դասընթացներ երիտասարդ կանանց տարբեր խմբերի համար

2022թ-ին երիտասարդ կանանց 3 խմբերի մասնակցությամբ եռօրյա սեմինարներ անցկացվեցին ՍՎԱԻ հիմնախնդիրների վերաբերյալ՝ ընդգրկելով այնպիսի թեմաներ, ինչպիսիք են առողջ սեռական հարաբերությունները, սեռականությունը և սեռական բռնության կանխումը: Ընդհանուր առմամբ, սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների վերաբերյալ մեր առցանց դասընթացներին մասնակցել են 60 կանայք:

ՍՎԱԻ գենդերազգայուն մոտեցման վերաբերյալ կարողությունների զարգացման դասընթացներ մասնագետների համար

2022թ-ին, երկու մարզային ՀԿ-ների համար մշակվել է վերապատրաստման դասընթացների շարք: Մասնագետները մշակել են երկօրյա ուսումնական ձեռնարկ՝ սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների հարցերի նկատմամբ հասարակական կազմակերպությունների զգայունությունը բարձրացնելու համար: Դասընթացների արդյունքում ՀԿ-ների անդամները զարգացրել են իրենց կարողությունները սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների վերաբերյալ, ծանոթացել են «Վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի հոդվածներին, խորապես ուսումնասիրել են աբորտի և հակաաբորտային շարժումների մոտեցումները: Ավելին, ՀԿ-ների անդամները զարգացրել են իրենց կարողությունները ՄԻԱՎ-ով ապրող կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, եզդի կանանց և ԼԲՏ կանանց վերարտադրողական իրավունքների խնդիրների վերաբերյալ:

Երիտասարդների կարողությունների զարգացման դասընթացներ

Երիտասարդ կանանց համար կազմակերպվել է հնգօրյա վերապատրաստման դասընթաց՝ նվիրված մարդու իրավունքներին, ներառյալ սեռական և վերարտադրողական առողջությանը և իրավունքներին: Ընդհանուր առմամբ, դասընթացին մասնակցել են 60 երիտասարդ կանայք: Դասընթացի արդյունքում ձևավորվել է մեկ նախաձեռնող խումբ, որը նախաձեռնել և իրականացրել է երկօրյա դասընթացներ սեռական առողջության թեմաներով իրենց համայնքի դեռահաս աղջիկների համար:

Սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացում մեդիայի միջոցով

Սեռական առողջության շաբաթ

Փետրվարի 14-21-ը սեռական առողջության ամենամյա շաբաթն է, այս տարի այն նվիրված էր ՍՃՓՎ-ների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Շաբաթվա ընթացքում

Իմ մարմին, իմ իրավունք էջն ակտիվորեն հրապարակում էր սեռավարակների մասին իրազեկող գրառումներ: Իրազեկման շաբաթվա վերջում պատրաստվել է փոդքասթ՝ անդրադառնալով ՍՃՓՎ-ների շուրջ նշված բոլոր խնդիրներին:

Կրծքով կերակրման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում

Օգոստոսի առաջին շաբաթվա ընթացքում էջը խթանել է կրծքով կերակրման վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը՝ կրծքով կերակրելու համաշխարհային շաբաթվա շրջանակներում:

Կրծքագեղձի քաղցկեղի իրազեկման ամիս

Հոկտեմբերը կրծքագեղձի քաղցկեղի իրազեկման ամիսն է, որի ընթացքում մենք մի շարք գրառումներ ենք կատարել այս թեմայի վերաբերյալ, մասնավորապես՝ կրծքագեղձի քաղցկեղի փուլերը (մաս 1, մաս 2, մաս 3, մաս 4), և կրծքագեղձի ինքնաքննություն (մաս 1, մաս 2): Բացի գրառումներից, հոկտեմբերի 17-ին անցկացվել է հանդիպում-քննարկում «Կրծքագեղձի խնամք և կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելում» թեմայով: Մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու կրծքագեղձի խնամքի առանձնահատկություններին, կրծքագեղձի ինքնազննման մեթոդներին, քաղցկեղի տարածվածությանը և կանխարգելման մեթոդներին:

«Վերարտադրողական իրավունքների շահերի պաշտպանության» ցանց

ՍՎԱԻ ծրագիրը իրականացնում է նաև շահերի պաշտպանություն: Հետևաբար, վերարտադրողական իրավունքի ոլորտում օրենսդրական և պետական քաղաքականության խնդիրները և սոցիալական փոփոխություններին ուղղված միջոցառումները իրականացվում են վերարտադրողական իրավունքների համար գործող ցանցի կողմից: «Վերարտադրողական իրավունքների շահերի պաշտպանության» ցանցը ստեղծվել է ԿՌԿ-ի ջանքերով 2017թ-ին՝ խթանելու կանանց տարբեր խմբերի վերարտադրողական իրավունքների իրացումը, ինչպիսիք են՝ ՄԻԱՎ-ով ապրող կանայք, գյուղաբնակ կանայք, եզդի կանայք, հաշմանդամություն ունեցող կանայք և Լեսբի, Բիսեքսուալ, Տրանսգենդեր կանայք:

ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԱԴՎՈԿԱՑԻԱ

Ադվոկացիան փուլային գործընթաց է՝ ուղղված որոշումներ կայացնողների, մասնավորապես պետական մարմինների կողմից մշակվող և կիրառվող քաղաքականությունների և օրենսդրության փոփոխությանն ու բարելավմանը: Մեր ադվոկացիոն աշխատանքը հիմնվում է ֆեմինիստական արժեքների ու մոտեցումների վրա, որի համար հիմք են ծառայում կանանց տարբեր խմբերի հիմնախնդիրները: Անձնական մակարդակում հանդիպող խնդիրները հավաքագրելուց հետո, ԿՌԿ ադվոկացիոն թիմը փորձում է քաղաքականացնել այդ հիմնախնդիրները՝ բարձրաձայնելով դրանք պետական մարմինների շրջանում և առաջարկելով դրանց լուծումներ օրենսդրական կամ պետական քաղաքականության մակարդակում: Ադվոկացիոն աշխատանքն իրականացնում ենք *տեղական և միջազգային մակարդակներում*՝ կանանց անձնական խնդիրներին տալով քաղաքական լուծումներ:

Ֆեմինիստական ադվոկացիան տեղական մակարդակում

Տեղական մակարդակում փորձում ենք ներազդել պետական քաղաքականությունների և օրենսդրական գործընթացների վրա և դարձնելով դրանք առավել գենդերազգայուն և ներառական կանանց համար, մասնավորապես՝

- հանդիպելով կանանց տարբեր խմբերի, քաղաքացիական հասարակության հետ և հավաքագրելով հիմնախնդիրները,
- համախմբելով քաղաքացիական հասարակության ջանքերը միասնական գործողություններ իրականացնելու,
- իրականացնելով հետազոտություններ և մշակելով քաղաքականության փաստաթղթեր,
- երկխոսելով պետական մարմինների ներկայացուցիչների հետ:

Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք

Հետպատերազմական շրջանում կանանց սեռական և վերարտադրողական իրավունքները հիմնականում սահմանափակվում են ծնելիության խթանմանն ուղղված քաղաքականություններով, մինչդեռ այդ քաղաքականություններն անգամ շարունակում են հասանելի չլինել կանանց տարբեր (հաշմանդամություն ունեցող, ՄԻԱՎ-ով ապրող, ԼԲՏ) խմբերի ներկայա-

ցուցիչների համար: Ավելին, այդ քաղաքականությունների խթանման արդյունքում, կանայք բախվում են հակաբեղմնավորիչ մեթոդների հասանելիության խոչընդոտներին: Կանանց տարբեր խմբերի վերարտադրողական իրավունքների հետ կապված խնդիրների բացահայտումն (վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման, հակաբեղմնավորիչների հասանելիության և այլ խնդիրներ) ու դրանց շուրջ ադվոկացիան ԿՌԿ ադվոկացիոն թիմի աշխատանքի հիմնական ուղղություններից էր.

Այս նպատակով, միավորել ենք «Վերարտադրողական իրավունքների շահերի պաշտպանության ցանց»-ի անդամների ջանքերը, որը ստեղծվել է ԿՌԿ-ի նախաձեռնությամբ 2017թ-ին և իրականացրել ադվոկացիա կանանց տարբեր խմբերի վերարտադրողական իրավունքների իրացման համար, մասնավորապես, պատրաստել ենք համապարփակ զեկույց՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման օրենսդրական մեխանիզմների և կիրառման հասանելիության վերաբերյալ կանանց տարբեր խմբերի շրջանում:

Զեկույցը հասանելի է հայերենով՝ https://bit.ly/3CEzl4U

Մշակել ենք պետության կողմից կանանց համար հակաբեղմնավորիչ մեթոդների հասանելիության ապահովման վերաբերյալ քաղաքականության փաստաթուղթ:

Փաստաթուղթը հասանելի է հայերենով՝ https://bit.ly/3ZpVIoC

Կանանց աշխատանքային իրավունքներ

2022թ-ին ՀՀ կառավարությունը նախաձեռնել էր ՀՀ աշխատանքային օրենսգրքի լայնածավալ փոփոխությունների փաթեթի մշակում և ընդունում: Այս փաթեթում, սակայն, բացակայում էին կանանց արժանապատիվ աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ կարևորագույն կարգավորումներ, ինչպիսին աշխատավայրում սեռական ոտնձգությունների արգելքն է: Ներկայումս աշխատավայրում սեռական ոտնձգության ենթարկվող կանայք չունեն որևէ իրավական մեխանիզմ իրենց աշխատանքային իրավունքները պաշտպանելու համար: Նրանք ստիպված են լինում աշխատել անառողջ միջավայրում կամ դուրս գալ աշխատանքից:

Շրջանառվող նախագծում նաև հետընթաց կարգավորումներ կային կանանց և տղամարդկանց հավասար վարձատրության սկզբունքի ամրագրման մասով: Այս սկզբունքի հիմնական նպատակը վարձատրության գենդերային խզվածքի նվազումն է:

Այս նպատակով, իրականացրել ենք ադվոկացիա աշխատանքային օրենսգրքի նախագծում համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքի (վարձատրության գենդերային խզվածքի վերացման) իրավական կարգավորումների վերանկանգնման ուղղությամբ:

Իրականացրել ենք ադվոկացիա Աշխատանքային օրենսգրքի նախագծում աշխատավայրում սեռական ոտնձգությունների կարգավորման մեխանիզմների ներդրման ուղղությամբ: Այս գործողության շրջանակներում իրականացրել ենք հարցում, շրջանառել ենք շուրջ 50 քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կոչ, որոնք պահանջում էին որոշում կայացնողներից ընդունել առաջարկվող կարգավորումները, ինչպես նաև ունեցել ենք մի շարք հանդիպումներ օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների հետ: Օրենսդրական առաջարկների փաթեթը հասանելի է հայերենով՝ https://bit.ly/3W2WdSs

Կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգ

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, ինչպես նաև Ադրբեջանի կողմից 2021 և 2022թթ. իրականացվող հարձակումներն իրենց ազդեցությունն ունեցան կանանց իրավունքների վրա: Պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում հատկապես կարևորություն է ձեռք բերում կանանց (այդ թվում տեղահանված կամ պատերազմական գործողություններից տուժած կանանց) առանձնահատուկ կարիքներին և խաղաղության գործընթացներում կանանց դերի բարձրացմանն ուղղված ադվոկացիոն աշխատանքները:

Այս նպատակով կազմակերպել ենք պարբերաբար խորհրդատվություններ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ հետպատերազմական շրջանում կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգի շուրջ: 2022թ. ընդհանուր թվով *2 հանդիպում է* իրականացվել: Հանդիպումների մասին առավել մանրամասն՝ https://bit.ly/3GVd05B https://bit.ly/3Qw5TE0

Իրականացրել ենք ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձևի գործողությունների ազգային պլանի ֆեմինիստական վերլուծություն:

Պետական քաղաքականությունների և օրենքների մշտադիտարկում

Ներկայացրել ենք առաջարկներ *օրենսդրական և քաղաքականության նախագծերի* շուրջ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով: Մասնավորապես՝ առաջարկներ ենք ներկայացրել անգործունակ անձանց առանց իրենց համաձայնության (դատարանի որոշմամբ) ամլացում իրականացնելու կարգի վերաբերյալ: Նաև առաջարկ ենք ներկայացրել փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող անձանց՝ Առողջապահության նախարարի որոշման նախագծով սահմանված խտրական պահանջները վերացնելու վերաբերյալ:

Ընտրվել ենք Մարդու իրավունքների պաշտպանին կից կանանց հասարակական խորհրդի անդամ և մասնակցել ենք *խորհրդի 2 նիստերին*:
Առավել մանրամասն՝
https://bit.ly/3W1M7RZ

Մասնակցել ենք Մարդու իրավունքների ռազմավարության 2023-2025 գործողությունների ազգային ծրագրի մշակման աշխատանքներին:
Առավել մանրամասն՝
https://bit.ly/3CAl35t

Օգտագործել ենք քաղաքացիական հասարակությանը հասանելի հանրային կառավարման մեխանիզմները և մասնակցել ենք փոխվարչապետին կից Կանանց խորհրդի, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Արդարադատության, Առողջապահության և Կրթության նախարարությունների հանրային խորհուրդների նիստերին: Ընդհանուր առմամբ մասնակցել ենք *17 հանրային խորհուրդների նիստերին* կառավարության ներկայացուցիչների հետ:

Իրականացրել ենք միասնական ադվոկացիա Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի և Հակախտրականության և հանուն հավասարության կոալիցիայի հետ:

Միջազգային ադվոկացիա

Միջազգային մակարդակում կազմակերպությունն իրականացնում է՝

ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին, հատուկ զեկուցողներին և միջազգային այլ կառույցներին կանանց հիմնախնդիրների շուրջ զեկույցների ներկայացում,

ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից պետությանն արված առաջարկների շուրջ ադվոկացիա:

2022թ-ին ադվոկացիոն թիմն աշխատել է մի քանի հիմնախնդիրների շուրջ, որոնք բխում են հետպատերազմական շրջանում կանանց տարբեր խմբերի կարիքներից: Միջազգային մակարդակում ԿՌԿ-ի գործունեությունն էր.

ներկայացրել ենք ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոմիտեին այլընտրանքային զեկույց,

կոմունիկացրել ենք հրատապ հարցերը ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության հատուկ զեկուցողի հետ,

Մասնակցել ենք միջազգային քննարկումների Եվրոպայի խորհրդում՝ կանանց արդարադատության մատչելիության https://bit.ly/3QDlou0 և ԱՍՏՐԱ (ASTRA Network) ցանցի շրջանակներում՝ սեռական և վերարտադրողական իրավունքների վերաբերյալ հանդիպմանը՝ https://bit.ly/3Gxvacq

2022թ-ին մենք միացել ենք Վեյվ (WAVE Network) եվրոպական կազմակերպությունների Ցանցին, որը գենդերային բռնության դեմ պայքարում միավորում է 160 կազմակերպություններ:

2022-ԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

«Աջակցություն Հայաստանում կանանց կայուն քաղաքացիական հասարակության կազմակերպմանը բազմակի ճգնաժամերի համատեքստում» ծրագիր

Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA) ֆինանսական աջակցությամբ ԿՌԿ-ն իրականացնում է «Աջակցություն Հայաստանում կանանց կայուն քաղաքացիական հասարակության կազմակերպմանը բազմակի ճգնաժամերի համատեքստում» ծրագիրը: Ծրագրի մի բաղադրիչը նպատակաուղղված է կանանց և գենդերային հարցերով զբաղվող ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը: Ծրագրի նպատակն է զարգացնել ՔՀԿ-ների կարողությունները՝ նպաստելով շահերի պաշտպանության համատեղ երկխոսությանը և գենդերային հավասարության հաստատմանը:

2022թ-ի ընթացքում համագործակցություն է հաստատվել տեղական 8 կազմակերպությունների հետ. այդ կազմակերպություններն են՝ Հայաստանում կանանց հիմնադրամ, Կանանց կենտրոն. Շուշի, Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն, Սոցիոսկոպ, Դեմոկրատիան այսօր, Կանանց իրավունքների տուն, Կանանց ներուժի զարգացման կենտրոն, Սևազգեստ կանայք:

Կազմակերպությունների կարիքների գնահատման իրականացումից հետո մշակվել է դասընթացների պլանը և ժամանակագրությունը: Առաջին տարվա ընթացքում իրականացվել են 18 դասընթացներ 13 թեմաների վերաբերյալ, որոնց մասնակցել են 39 ՔՀԿ աշխատակիցներ: Դասընթացներն իրականացվել են հետևյալ թեմաներով՝ թվային անվտանգություն, ռազմավարական պլանավորում, ռազմավարական հաղորդակցության սկզբունքներ, աշխատանք դոնոր համայնքի հետ, ռեսուրսներ շահույթ չհետապնդող կազմակերպությանը, սոցիալական ներառականություն, արդյունահեն կառավարում, գործունեության վրա հիմնված բյուջետավորում, հաղորդակցման պլան, տեղեկատվական արշավներ, աշխատանք կառավարության հետ, ադվոկացիա, գենդերային վերլուծություն, գենդերազգայուն քաղաքականություն: Դասընթացներից հետո սկսվել են նշված կազմակերպությունների հետ անհատական խորհրդատվություններ՝ դասընթացները վարող փորձագետների կողմից:

Դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ կազմակերպությունները իրականացրել են տարբեր ծրագրեր, ձեռք բերել իրենց կայունության համար անհրաժեշտ գույք և գիտելիքներ: Կատարված ծրագրերի օրինակներից է Կանանց կենտրոն. Շուշի ՀԿ-ի կողմից իրականացված հետազոտությունը «Հայաստանում տեղահանված կանանց կարիքների գնահատում» թեմայով և Հայաստանում կանանց հիմնադրամի կողմից իրականացված հավաքական խնամքի վերաբերյալ հետազոտությունը:

«Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագիր

«Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագիրը 2020-2022թթ-ին իրականացվել է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի շրջանակներում ԿՌԿ-ի կողմից իրականացված գործողությունների շնորհիվ 520 կանայք աջակցություն են ստացել իրավական խորհրդատվության և ենթադրամաշնորհային ծրագրերի միջոցով:

Ընդհանուր առմամբ, 20 ենթադրամաշնորհներ են տրամադրվել մարզային ՔՀԿ-ներին՝ իրենց մարզերում կանանց տնտեսական զորեղացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու նպատակով: Արդյունքում, 334 կանայք ուղիղ աջակցություն են ստացել, որոնցից 47-ը ձեռք են բերել նոր մասնագիտություններ և անհրաժեշտ գույք, որի շնորհիվ սկսել են աշխատել և տնտեսապես անկախանալ:

Ծրագրի շրջանակներում ԿՌԿ-ն պատվիրակել է Հայաստանում առաջին հետազոտությունը՝ «Գենդերային հիմքով բռնությունը ազատությունից զրկված կանանց նկատմամբ հիմնախնդրի ուսումնասիրում հայաստանյան համատեքստում» թեմայով: Հետազոտությունը իրականացրել է Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոնը: 2022թ-ի հունիսի 17-ին հետազոտության արդյունքները ներկայացվեցին շուրջ 70 մասնակիցների, այդ թվում պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, իրավապաշտպանների և մեդիա ներկայացուցիչների:

Ամբողջական հետազոտությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով. Գենդերային հիմքով բռնությունը ազատությունից զրկված կանանց նկատմամբ հիմնախնդրի ուսումնասիրում հայաստանյան համատեքստում

Ծրագրի շրջանակներում նաև պատրաստվել են 3 սոցիալական հոլովակներ աշխատավայրում սեռական ոտնձգության, ընտանեկան բռնության և երկրորդային զոհականացման (victim blaming) վերաբերյալ: Այս սոցիալական հոլովակները ունեցել են ավելի քան 70,000 դիտումներ: Այս հոլովակները ոչ միայն բարձրացրել են հասարակության իրազեկվածությունը, այլև նպաստել են Կոալիցիայի կազմակերպությունների թեժ գծերի ավելի տեսանելի լինելուն:

Սոցիալական հոլովակները կարող եք դիտել հետևյալ հղումներով.

Աշխատավայրում սեռական ոտնձգություն

Ընտանեկան բռնություն

Երկրորդային զոհականացում

ԿԱՆԱՆՑ ՁԱՅՆ ՌԱԴԻՈ

Կանանց ձայն ռադիո-ի առաքելությունն է լսելի դարձնել կանանց ձայնը Հայաստանում, հասարակությանը տեղեկացնել կանանց իրավունքների, խնդիրների և դերերի մասին: Այս նպատակներին հասնելու համար մենք հարցազրույցներ ենք իրականացրել, որոնք ներկայացրել են կանանց իրավունքների համար պայքարող հայաստանյան և միջազգային կազմակերպությունների գործունեությունը, ծրագրերը, նպատակները և տեսլականը:

Կանանց ձայն ռադիո-ն նաև մեկնաբանում է ոլորտին վերաբերող բոլոր ակցիաներն ու միջոցառումները, ինչպիսիք են ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օրը, կրծքագեղձի քաղցկեղի իրազեկման ամիսը, գենդերային բռնությունների 16-օրյակը, սեռական բռնության իրազեկման ամիսը, Մարտի 8-ը և այլն:

Դուք կարող եք մեզ գտնել Facebook-ում և Soundcloud-ում:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԴԻԱ

2022թ-ին ԿՌԿ-ն նախաձեռնել է բազմաթիվ մեդիա արշավներ՝ կանանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով: Մասնավորապես՝

Ուկրաինայում ռուսական ագրեսիայի հետևանքով Հայաստան տեղափոխված կանանց համար ձեռնարկի պատրաստում և տարածում, որի նպատակն է տեղեկացնել անհրաժեշտ ծառայությունների և թեժ գծերի մասին:

Սոցիալական մեդիայի հարցում՝ հասկանալու մեր լսարանի կարծիքը սոցիալական մեդիայում մեր ներկայության վերաբերյալ: Հարցմանը մասնակցել է մոտ 200 օգտատեր: Հարցման արդյունքում մշակվել է հոգեբանական թեմաներին նվիրված հրապարակումների շարք:

«Հարց իրավաբանին» հրապարակումների շարքի ներմուծում՝ ԿՌԿ իրավաբանի հետ համագործակցությամբ՝ պատասխանելով կանանց աշխատանքային իրավունքների, ինչպես նաև ամուսնաընտանեկան զանազան թեմաների վերաբերյալ հարցերի:

2022թ. փետրվար ամսին (14-21)՝ Սեռական առողջության շաբաթվա ընթացքում, ԿՌԿ հաղորդակցության թիմն իրականացրեց իրազեկման արշավ: Հրապարակումներ ենք արել հետևյալ թեմաներով՝ սեռավարակների տարածման ուղիներ, դրանց հիմնական նշաններ, սեռավարակների կանխարգելում, կանանց առավել խոցելիություն սեռավարակների հանդեպ, ինչպես նաև դրանց վերաբերյալ տարածված միֆեր: Արշավի արդյունքում հնարավոր է եղել տեղեկատվությունը հասցնել 500 և ավելի օգտատերերի ֆեյսբուք և ինստագրամ սոցիալական հարթակներում:

Սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացրել ենք մեկ այլ տեղեկատվական արշավ՝ նվիրված աշխատավայրում սեռական ոտնձգությունների թեմայի վերաբերյալ իրազեկմանը: Արշավի ընթացքում ներկայացրել ենք աշխատավայրում սեռական ոտնձգությունների չբարձրաձայնման պատճառները, դրա օրինակներ, ինչ անել սեռական ոտնձգության ենթարկվելու դեպքում, ինչպես նաև՝ պետության պարտավորությունները խնդրի լուծման գործում: Արշավը լայն տարածում է գտել հատկապես ինստագրամ սոցիալական հարթակում՝ հասնելով 1000 օգտատերերի:

Դուք կարող եք հետևել մեզ

Facebook, Instagram, Twitter, LinkedIn

և YouTube սոցիալական մեդիա

հարթակներում և այցելելով մեր կայքէջ:

«ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022

Կապ մեզ հետ՝

info@womenofarmenia.org

+37494565626

Մեր հասցեն՝

Սարյան 24/5, Երևան, Հայաստան, 0002